Ա Ռ Ա Ր Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 9-Ի ԹԻՎ ԹԻՎ 3-Ն, 8-Ա, 10-Ա, 12-Ա, 13-Ա, 15-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 3-Ն որոշումը չի համապատասխանում «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներին, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետությունում բյուջետային տարին սկսվում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից և ավարտվում նույն տարվա դեկտեմբերի 31-ին, սակայն ավագանու որոշմամբ 2020 թվականի բյուջեում փոփոխություններ են կատարվել: Բացի այդ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 223-Ն որոշմամբ արդեն իսկ հաստատվել է Գյումրի համայնքի 2021 թվականի բյուջեն:

Թիվ 8-Ա որոշումը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներին:

Թիվ 10-Ա որոշման մեջ հղում չի կատարված «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի դրույթներին:

Թիվ 12-Ա որոշմանը կից ներկայացված չէ որոշման անբաժանելի մաս հանդիսացող հավելվածը:

Թիվ թիվ 13-Ա, 15-Ա որոշումների նախաբանում գրառված չեն իրավական ակտերի ընդունման նպատակներն ու պատճառները (Հիմք՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մաս):

25.03.2021թ.